1918-1920 ԹԹ. ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԸ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ*

Վրեժ Հարությունյան

Բանալի բառեր՝ Արցախ, ազատագրական պայքար, Ազգային խորհուրդ, ՀՀ կառավարություն, համագումար, բռնակցում:

1918-1920 թվականները հայ ժողովրդի համար բախտորոշ ժամանակաշրջան էր, երբ ցարական կարգերի տապալումից հետո ի վերջո Անդրկովկասում ծնունդ առան նորանկախ պետություններ Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը: Ազգային անկախ պետականությունը ստեղծվեց պատմական դժվարին պայմաններում՝ ունենալով տնտեսական լրջագույն խնդիրներ՝ սով, գաղթականություն, ներքին խռովություններ:

Հայաստանի անկախացումից հետո լարված ու թշնամական բնույթ ստացան հայ-ադրբեջանական հարաբերությունները: Մուսավաթական Ադրբեջանը, ոգևորվելով Անդրկովկասում Թուրքիայի նվաճողական քաղաքականությունից, հավակնություններ դրսևորեց երբեմնի Ելիզավետպոլի նահանգի մաս կազմող Արցախ-Ղարաբաղի տարածքների նկատմամբ: Լեռնավայրը, գտնվելով Հայաստանի ու Ադրբեջանի միջև տեղի ունեցող հակասությունների կիզակետում, դառնում է արյունալի բախումների թատերաբեմ: Նշյալ ժամանակահատվածում Արցախի հայությունը կենաց ու մահու կռվի էր դուրս եկել ադրբեջանական հրոսակների և նրանց աջակցող թուրքական, իսկ այնուհետ՝ կարմիր բանակի զորամասերի դեմ: Նման իրավիճակում Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը Հայաստանի կառավարությունից պահանջում էր երկրամասը միավորել մայր Հայաստանի հետ: Սակայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը չափազանց զգույշ քաղաքականություն էր վարում և արագ քայլեր չձեռնարկեց, որովհետև ընթացող պատերազմում այդ պահին Անդրկովկասում տեր ու տնօրինություն էր անում գերմանաթուրքական խմբավորումը, որի աջակցությունն էր վայելում Ադրբեջանը: Բայց հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի կառավարությունը և իշխող կուսակցությունը՝ դաշնակցությունը, իրենց ընդունած որոշումներով Հայաստանի անբաժան մաս էին ճանաչել Ղարաբաղը[1]: Արցախին օգնելու համար Հայաստանի խորհրդարանում պարբերաբար տեղի են ունեցել քննարկումներ, որոնց արդյունքում որոշվել է ստեղծել դրամական ֆոնդ՝ 8 մլն. ռուբլու չափով[2]:

«Ստեղծված պայմաններում, - գրում է Բագրատ Ուլուբաբյանը, միայն իր հույսին մնացած Արցախի հասարակական ուժերը, Հայ հեղափոխական դաշնակցության ամենաեռանդուն մասնակցությամբ, ստեղծեցին մարզի կյանքի կարգավորման մի մարմին»[3], որը կոչվեց «Միջկուսակցական բյուրո»՝ Հայրապետ Մուսայելյանի նախագահությամբ: Շուտով բյուրոն Շուշի քաղաքում հրավիրեց արցախահայության առաջին համագումարը, որը տեղի ունեցավ 1918 թ. հուլիսի 22-24-ը: Համագումարը որոշեց Ղարաբաղը հռչակել Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս: Այնտեղ ընդունվեց «Ղարաբաղի ժամանակավոր կառավարություն»[4] ստեղծելու մասին որոշումը, որի նախագահ ընտրվեց Եղիշե Իշխանյանը:

Սեպտեմբերին Ղարաբաղ են մտնում թուրքական զորամասերը և կարողանում հաստատվել Շուշիում: Սակայն թուրքերին չի հաջողվում կոտրել գավառահայության դիմադրությունը և նվաճել ամբողջ Ղարաբաղը: Հոկտեմբերին Թուրքիան պարտութ-

---

* Հոդվածն ընդունվել է 14.04.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.թ., դոցենտ Կ. Եղիազարյանը: 20.04.21:

յուն է կրում առաջին համաշխարհային պատերազմում և ստիպված է լինում զորքերը դուրս բերել նվաճած տարածքներից, այդ թվում և Ղարաբաղից: Սակայն ստեղծված բարենպաստ իրավիճակից Հայաստանի կառավարությունը այս անգամ էլ չօգտվեց և իր զորքերը չմտցրեց Ղարաբաղ ու չշտապեց երկրամասը միավորել մայր հայրենիքին, այլ հարևան երկրների հետ սահմանային հարցերի լուծման հույսը կապեց մեծ տերությունների հետ, որոնք պետք է հրավիրվելիք համաժողովում լուծում տային նաև հայկական տարածքային խնդիրներին: Իսկ վարչապետ Հովի. Քաջազնունին ընդհանրապես այդ մասին լսել անգամ չէր ուզում[5]: Փոխարենը արցախցիների խնդրանքով, Զանգեզուրում գտնվող Անդրանիկը փորձեց իր զորամասով մտնել Ղարաբաղ, բայց մեզ հայտնի պատճառներով դա էլ ձախողվեց:

Անդրկովկասում տնօրինություն անող Անգլիայի թույլտվությամբ Ադրբեջանը 1919 թ. հունվարին Արցախի ու Զանգեզուրի գեներալ-նահանգապետ նշանակեց Խոսրով բեկ Սուլթանովին: Գեներալ-նահանգապետի՝ Ադրբեջանի ներկայացուցիչ լինելը չընդունվեց Հայաստանի Հանրապետության կողմից, և արտաքին գործերի նախարար Միրական Տիգրանյանը բողոքի ու մերժումի գիր ուղարկեց Բաքու՝ բավարարվելով միայն դրանով:

Ոգևորվելով Անգլիայի հովանավորությունից՝ Ադրբեջանը վերջնագիր ներկայացրեց Արցախի Հայոց Ազգային խորհրդին: Սակայն արցախցիները շարունակում էին մնալ անկոտրում և տեղի ունեցած համագումարները (չորրորդից - վեցերորդ) մերժեց Ադրբեջանի իշխանության բոլոր պահանջները: Նման իրավիճակում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը հայտարարեց, որ Զանգեզուրի ու Ղարաբաղի հայ բնակչությանը չի կարելի ստիպել ենթարկվել Ադրբեջանին[6]: Նույնիսկ 1919 թ. ապրիլի սկզբին Հայաստանի կառավարությունը, որպեսզի նեցուկ կանգնի Արցախի հայությանը, փոխգնդապետ Մ. Արզումանյանին նշանակում է Ղարաբաղի գործերի և կառավարման գծով Բրիտանական հրամանատարության լիազորին առընթեր ներկայացուցիչ[7]: Մ. Արզումանյանը Ղարաբաղում հանդիպումներ է ունենում Ազգային Խորհրդի անդամների հետ, տալիս հրահանգներ և փոխանցում Հայաստանի կառավարության ուղարկած 290.000 ռուբլի գումարը[8]: Մեկ ուրիշ փոխգնդապետի՝ Արսեն Շահմազյանին, կառավարությունը ուղարկել էր Գորիս՝Արցախի ու Զանգեզուրի գեներալ-կոմիսարի պաշտոնով: Գորիսից Արսեն Շահմազյանը կապ է հաստատում Արցախի Հայոց Ազգային Խորհրդի հետ, տրամադրում գումար և անցնում գործուն քայլերի:

Նման ձեռնարկումներից գազազած Սուլթանովը անգլիական միսիայի թույլտվությամբ ու նրանց աչքի առաջ 1919 թ. հունիսին ավերեց Ղարաբաղի հայկական մի շարք գյուղեր ու կոտորեց տեղի բնակիչներին: Ադրբեջանի կողմից կազմակերպված ջարդերը դժգոհություն առաջացրին հայ իրականության մեջ: Երևանում տեղի ունեցան բազմահազարանոց ցույցեր, Թիֆլիսի հայրենակցական կազմակերպությունները ընդունեցին հուշագիր, որով պահանջում էին դաշնակից երկրներից, Հայաստանի կառավարությունից միջամտելու, որպեսզի դադարեցնեն կոտորածները և Ղարաբաղից վտարեն Սուլթանովին:

Հայստանի կառավարության կողմից 1919 թ. վերջերին իր զորամասով Գորիս է ժամանում Դրոն, ում հանձնարարված էր զենքի ուժով վերջնականապես լուծել Ղարաբաղի հարցը[9], ինչի համար անհրաժեշտ էր կազմակերպել Զանգեզուրի մարտական ուժերը, լուծել տեղի թուրքերի հարցը, հայթայթել զենքի ու զինամթերքի պաշարներ և մի շարք այլ քայլեր ձեռնարկել: Մինչ այդ ամենի կազմակերպելը Դրոն Արցախ ուղարկեց մի խումբ քաղաքական գործիչներ և սպաներ (Կ. Աթայան, Սասունցի Մուշեղ, Տեր-Մարտիրոսյան), ովքեր սկսեցին կազմակերպել տեղի հայության ինքնապաշտպանությունը: Նրանք իրենց գործունեության կենտրոն դարձրին Ջրաբերդն ու Խաչենը:

Այս պայմաններում 1920 թ. փետրվարի 28-ից մինչև մարտի 5-ը Շոշ գյուղում տեղի ունեցած արցախահայության ութերորդ համագումարը Ադրբեջանից պահանջեց դադարեցնել կոտորածները, հակառակ դեպքում սպառնալով դիմել զենքի: Նման որոշումից կատաղած ադրբեջանական ուժերը (հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ Զանգեզուրում հայկական կողմը ջարդել էր թուրքական ուժերին և երկրամասը մաքրել նրանցից, ինչի վրեժը ադրբեջանցիները փորձեցին լուծել Ղարաբաղում) անցան հարձակման և տեղի ունեցան կատաղի կռիվներ: Չնայած արցախցիների հերոսական դիմադրությանը, մանավանդ Ասկերանի ուղղությամբ, ապրիլի սկզբին թշնամուն հաջողվեց ճեղքել պաշտպանական գիծը և շարժվել դեպի Շուշի, որտեղ իրականացրին հայերի ջարդերը: Շուշիում տեղի ունեցած հայերի կոտորածը բողոքի ալիք բարձրացրեց հայ իրականության մեջ: Այդ կապակցությամբ Հայաստանի խորհրդարանում տեղի ունեցան քննարկումներ, որտեղ որոշվեց հավանություն տալ կառավարության առաջարկին, և հարցը քննարկել Թիֆլիսում կայանալիք խորհրդաժողովում, որը հրավիրեցին դաշնակից տերությունների ներկայացուցիչները [10]: Մինչ մեծ տերությունների ներկայացուցիչները կոչ էին անում դադարեցնել ազգամիջյան կռիվները, Արցախը զգում էր օգնության կարիք և ապրում էր ծանր օրեր: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետությունը իր ներկայացուցիչ փոխգնդապետ Թարվերդյանին Գորիսից ուղարկում է Ղարաբաղ: Վերջինս իր հետ տանում է բավական զենք, զինամթերք, թնդանոթներ ու դրամագլուխ [11]: Դրանից հետո արցախցիներին հաջողվում է փայլուն հաղթանակներ տանել և ստիպել ադրբեջանական ուժերին նահանջել, որոնք, ստանալով Դրոյի՝ Ղարաբաղ գալու լուրը, հեռանում են առաջնագծից:

Չնայած Հայաստանի Հանրապետության ծանր կացությանը՝ կառավարությունը դեռևս փետրվարին որոշել էր Ղարաբաղ ուղարկել Դրոյին: Սակայն Դրոն մի փոքր զորաջոկատով Արցախ հասավ միայն ապրիլի կեսերին, որովհետև ձմռան պայմաններում դժվարություններ էին ստեղծվել զինամթերքի փոխադրման համար և Սուրմալուում նույնպես բռնկվել էին հայ-քրդական կռիվներ: Դրոն ստիպված էր գերմարդկային ճիգեր լարել ու հասնել Սուրմալու, լուծել խնդիրը և նոր վերադառնալ Արցախ ու հաստատվել Վարանդայում: Միևնույն ժամանակ Հայաստանի կառավարությունը Զանգեզուրից Դիզակ ուղարկեց Նժդեհին:

1920 թ. ապրիլի 25-ին Թաղավարդ գյուղում հրավիրվեց արցախահայության 9-րդ համագումարը, որտեղ որոշվեց «հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը՝ որպես նրա անբաժան մաս» [12], ստեղծվեց նաև Արցախի ժամանակավոր կառավարություն:

Կարծես թե իրականանում էին արցախահայության երազանքները, սակայն ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվում են խորհրդային կարգեր, իսկ ապրիլի 29-ին Սուլթանովը իրեն հռչակում է Ղարաբաղի հեղկոմի նախագահ: Այս անգամ էլ Ադրբեջանը, ստանալով Խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի օժանդակությունը, վերջնագիր է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ պահանջելով զորքերը դուրս բերել Ղարաբաղից: Ի պատասխան Ադրբեջանի վերջնագրի՝ ՀՀ արտգործնախարար Համո Օհանջանյանը հեռագրում է Բաքու և Մոսկվա՝ նշելով, որ Ադրբեջանի տարածքում հայկական զորամաս չկա, այլ ընդհակառակը՝ Ադրբեջանն է միջամտում հայկական Արցախի ներքին գործերին, կազմակերպում այնտեղ կոտորածներ: Հ. Օհանջանյանը առաջարկում է Ղարաբաղ ուղարկել մի չեզոք հանձնախումբ՝ տեղում պարզելու խնդիրը [13]:

1920 թ. մայիսի 12-ին Շուշի է մտնում 11-րդ կարմիր բանակի մի զորամաս և Արցախը հայտարարում Խորհրդային Ադրբեջանի մաս: Դրոն այդ մասին մայիսի 19-ին հեռագիր է ուղարկում Հայստանի կառավարությանը՝ պահանջելով օգնություն: Հայաստանի կառավարությունը գործնական քայլեր չի իրականացնում, այլ հարցը փորձում էր լուծել բանակցությունների ճանապարհով: Այդ պատճառով Մոսկվա ուղարկված

հայկական պատվիրակությունը, որը գլխավորում էր Լ. Շանթը, խորհրդային իշխանություններից պահանջում էր ճանաչել Հայաստանի անկախությունը Ղարաբաղի և Զանգեզուրի սահմաններում [14]:

Դրոն, Հայաստանի կառավարությունից հրահանգներ չստանալով, ստիպված էր մայիսի 25-ին հեռանալ Արցախից: Հաջորդ օրը Վարանդայի Թաղավարդ գյուղում տեղի ունեցած Արցախի հայության 10-րդ համագումարը երկրամասը հայտարարեց խորհրդային և ստեղծվեց հեղկոմ՝ Սաքո Համբարձումյանի գլխավորությամբ:

Ամռան ամիսներին Մոսկվայում ընթացող հայ-ռուսական բանակցությունները արդյունք չտվեցին և ընդմիջվեցին: Բանակցությունները վերսկսվեցին Թիֆլիսում և օգոստոսի 10-ին ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի՝ Հայաստանը համաձայնում է, որ մինչև հարցի վերջնական լուծումը, Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ժամանակավորապես զբաղեցնեն խորհրդային զորքերը: Սակայն սեպտեմբերին սկսված թուրք-հայկական պատերազմը նոր մարտահրավերներ նետեց Հայաստանի Հանրապետությանը: Վերջինս, պատերազմում կրելով ծանր պարտություն, այլ ընտրանք չունենալով, ստիպված էր ընդունել խորհրդային կարգեր: Բաքվում կազմավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն Սարգիս Կասյանի և 11-րդ կարմիր բանակի մի զորամասի գլխավորությամբ, 1920 թ. նոյեմբերի 29-ին Ադրբեջանից մտավ Հայաստան և երկիրը հռչակեց «խորհրդային սոցիալիստական հանրապետություն»: Հաջորդ օրը Բաքուն հանդես եկավ «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի մաս ճանաչելու» հայտարարությամբ: Սակայն հետագայում Ադրբեջանը ոչ միայն հրաժարվեց իր իսկ որոշումից, այլև գործի դրեց բոլոր միջոցները՝ հայկական երկրամասերը Ադրբեջանին բռնակցելու համար: Դեկտեմբերի 2-ին Երևանում կնքվեց հայ-ռուսական համաձայնագիր, և իշխանությունը խաղաղ ճանապարհով հանձնվեց բոլշևիկներին: Իսկ 1921 թ. հուլիսի 5-ի կովկասյան բյուրոյի պլենումի ոչ օրինական որոշումով՝ Ղարաբաղը «թողնվեց Ադրբեջանական ՍԽՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն»:

Այսպիսով՝ գալիս ենք այն եզրահանգմանը, որ 1918-1920 թթ. արցախահայությունը ոտքի կանգնեց ու պայքարեց իր իրավունքների, իր ազատության համար և չնայած արտաքին բոլոր ճնշումներին՝ կարողացավ պահպանել իր ինքնուրույնությունն ու սեփական հայրենիքում ապրելու իրավունքը: Չնայած տարածված է այն տեսակետը, թե ՀՀ բարձրագույն իշխանությունները հետևողական չեն եղել Արցախի խնդրում, և որ իբր դրա համար էլ երկրամասը հայտնվեց Ադրբեջանի կազմում: Սակայն ինչքան էլ դժվար ու ծանր էր Հայաստանի ներքին ու արտաքին վիճակը, երկրի կառավարությունը իրականացնում էր հնարավոր բոլոր քայլերը՝ պաշտպան կանգնելու արցախահայության արդարացի պահանջներին: ՀՀ կառավարությունն ու խորհրդարանը թե՛ ֆինանսական, թե՛ կադրային, թե՛ այլ տարբերակներով Ղարաբաղի Ազգային Խորհրդին տրամադրում էին համակողմանի օգնություն: ՀՅԴ-ն՝ որպես կառավարող ուժ, նույնպես վարում էր Արցախի միացումը մայր հայրենիքին քաղաքականություն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը հիշատակները, հ. է, Թեհրան, 1982, էջ 185:
2. Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Երևան, 2005, էջ 268:
3. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 203:
4. Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999, էջ 175:
5. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000, էջ 32:

6. Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 214:
7. Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2011, էջ 224:
8. Իշխանյան Ե., նշվ. աշխ., էջ 411:
9. Դրո, Կենսագրական: Հուշեր: Վկայություններ: Երևան, 1991, էջ, 138:
10. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 396-397:
11. Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 228:
12. Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Երևան, 1991, էջ 39:
13. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թ. 36:
14. Լազեան Գ., Հայաստան և հայ դատը, Երևան, 1991, էջ 231:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

1918-1920 թթ. Արցախյան գոյամարտը և Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը

Վրեժ Հարությունյան

1918թ. ծնունդ առավ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը, որի առջև դրված էին սոցիալ-տնտեսական լրջագույն խնդիրներ: Հայաստանի անկախացումից հետո լարված ու թշնամական բնույթ ստացան հայ-ադրբեջանական հարաբերությունները: Ադրբեջանը հավակնություններ դրսևորեց Արցախ-Ղարաբաղի տարածքների նկատմամբ: Նշյալ ժամանակահատվածում Արցախի հայությունը կենաց ու մահու կռվի էր դուրս եկել ադրբեջանական հրոսակների և նրանց աջակցող թուրքական, իսկ այնուհետ՝ կարմիր բանակի զորամասերի դեմ: Բայց հարկ ենք համարում նշել, որ արցախահայությունը այդ վճռական պահերին չմնաց միայնակ, այլ ստացավ Հայաստանի կառավարության և իշխող կուսակցության՝ դաշնակցության օգնությունը և աջակցությունը:

РЕЗЮМЕ

Арцахская война 1918-1920 гг. и позиция Республики Армения

Вреж Арутюнян

Ключевые слова: Арцах, освободительная борьба, Национальный совет, правительство РА, конгресс, захват.

В 1918 году возникла новая независимая Республика Армения, перед которой стояли серьезнейшие социально-экономические проблемы. После обретения Арменией независимости армяно-азербайджанские отношения стали более напряженными и враждебными. Азербайджан стал претендовать на территории Арцаха-Карабаха. За указанный период армянство Арцаха вступило в смертельную схватку против азербайджанских бандитов и поддерживающих их турецких, а затем и воинских частей Красной Армии. Но считаем необходимым отметить, что в эти решающие моменты арцахцы не остались в одиночестве, а получили помощь и поддержку правительства Армении и правящей партии Дашнакцутюн.

SUMMARY

The Artsakh War of 1918-1920 and the position of the Republic of Armenia

Vrezh Harutyunyan

Keywords: Artsakh, liberation struggle, National Council, Government of the RA, congress, capture.

In 1918, a new independent Republic of Armenia emerged, which faced the most serious socio-economic problems. After Armenia gained independence, the Armenian-Azerbaijani relations became more tense and hostile. Azerbaijan began to claim the territories of Artsakh-Karabakh. During this period, the Armenians of Artsakh entered into a life-and-death struggle against the Azerbaijani bandits and the Turkish, and then the military units of the Red Army supporting them. But we consider it necessary to note that at these crucial moments, the people of Artsakh were not left alone, but received the help and support of the Armenian government and the ruling Dashnaktsutyun party.